ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածի՝

1) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրեր՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների կամ այլ աղբյուրների հաշվին իրականացվող ծրագրեր, որոնք ուղղված են բնակչության առողջության պահպանմանը կամ բարելավմանը կամ հիվանդությունների կանխարգելմանը կամ բնակչության բժշկական օգնության և սպասարկման կազմակերպմանը կամ դեղորայքային ապահովմանը կամ հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովմանը կամ բուժաշխատողների շարունակական մասնագիտական զարգացման կազմակերպմանը:

Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերը պետական բյուջեի նախագծի կազմում Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացնում է Ազգային ժողով: Պետությունը բյուջետային նպատակային ֆինանսավորման միջոցով ապահովում է առողջապահության բնագավառի պահպանումը և զարգացումը, որի ծավալները որոշվում են բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերին համապատասխան:

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.Արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում՝ բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում անձին տրամադրված բժշկական օգնության և սպասարկման, դեղերի և (կամ) բժշկական պարագաների դիմաց մասնակի փոխհատուցում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:»:

Հոդված 2.Օրենքը 3-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1-րդ, 3.2-րդ, 3.3-րդ հոդվածներով՝

«Հոդված 3.1. Առողջապահության բնագավառի տվյալների բազաները, դրանց վարման նպատակները

1.Առողջապահության բնագավառի տվյալների բազաները մարդու և հանրության առողջության պահպանմանը, ապահովմանն ու բարելավմանն ուղղված գործունեությանը վերաբերող ոչ անձնական տվյալների կամ պացիենտների անձնական տվյալների ամբողջություններ են, որոնք մշակվում են առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (ներառյալ՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեության իրականացնող պետական կազմակերպություններ) կամ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

2.Պացիենտների անձնական տվյալների, ներառյալ առողջական վիճակին վերաբերող «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված հատուկ կատեգորիայի տվյալները սույն օրենքով նախատեսված դեպքերում մշակվում են առանց պացիենտի համաձայնության:

3.Առողջապահության բնագավառի տվյալների բազաները մշակվում են հետևյալ նպատակների իրականացման համար.

1) առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի (ներառյալ՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեության իրականացնող պետական

կազմակերպություններ) կողմից վարվող առողջապահության բնագավառի տվյալների բազաները՝

ա. հիվանդությունների համալիր հսկողության՝ հիվանդությունների տարածման պատճառների ու պայմանների բացահայտման, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով.

բ. բժշկական օգնություն և սպասարկում (ներառյալ դեղի նշանակում և դեղի բացթողում) տրամադրելու նպատակով քաղաքացու առողջության վերաբերյալ միասնական ձևաչափով անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով,

գ. հիվանդությունների կանխարգելման, բուժման և կառավարման նպատակով՝ ինչպես անհատական, այնպես էլ բնակչության մակարդակով,

դ. պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման նպատակով,

ե. առողջապահական ծառայությունների դիմաց վճարման (փոխհատուցման) գործընթացի դյուրացման նպատակով,

զ.սոցիալական փաթեթի առողջապահական բաղադրիչի գործարկման նպատակով,

է.հանրության առողջապահական կարիքների գնահատման նպատակով,

ը.առողջապահական համակարգի գործունեության պլանավորման, կառավարման, գնահատման նպատակով,

թ.առողջապահական համակարգի գործունեության համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման նպատակով,

ժ.հանրային առողջության վիճակի վերահսկման, գնահատման, ինչպես նաև ռիսկերի և վտանգների վերհանման և դրանց դեմ պայքարի նպատակով,

ժա.առողջապահական ծառայությունների որակի, անվտանգության և արդյունավետության գնահատման նպատակով:

2) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից վարվող առողջապահության բնագավառի տվյալների բազաները՝

ա. հիվանդությունների համալիր հսկողության՝ հիվանդությունների տարածման պատճառների ու պայմանների բացահայտման, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման նպատակով անհրաժեշտ գործողությունների իրականացման նպատակով.

բ. բժշկական օգնություն և սպասարկում (ներառյալ դեղի նշանակում և դեղի բացթողում) տրամադրելու նպատակով քաղաքացու առողջության վերաբերյալ միասնական ձևաչափով անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման նպատակով,

գ. հիվանդությունների կանխարգելման, բուժման և կառավարման նպատակով՝ ինչպես անհատական, այնպես էլ բնակչության մակարդակով,

դ. պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման նպատակով,

ե. առողջապահական ծառայությունների դիմաց վճարման (փոխհատուցման) գործընթացի դյուրացման նպատակով:

4.Առողջապահության բնագավառի տվյալների բազաներում կախված մշակման նպատակներից կարող են ներառվել հետևյալ անձնական, ներառյալ հատուկ կատեգորիայի տվյալները,

1) անձի անուն, ազգանուն, հայրանունը (առկայության դեպքում),

2) սեռը,

3)ծննդյան օրը, ամիսը, տարին,

4) տարիքը (անհայտ լինելու դեպքում՝ մոտավոր տարիքը),

5) հաշվառման և փաստացի բնակության վայրերը, հեռախոսի համարը (առկայության դեպքում), էլեկտրոնային փոստի հասցեն (առկայության դեպքում)

6) անձնագրի համարը, սերիան, ում կողմից է տրվել, գործողության ժամկետը կամ նույնականացման քարտի համարը կամ հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը, կամ սոցիալական ապահովության քարտի համարը, կամ սոցիալական ապահովության քարտ չունենալու վերաբերյալ տեղեկանքի համարը.

7) քաղաքացիությունը,

8) ընտանեկան դրությունը, երեխաների առկայությունը, թիվը,

9)կրթության և աշխատանքի վերաբերյալ տեղեկատվություն,

10) սոցիալապես անապահով կամ հատուկ խմբերին պատկանելությունը,

11) բժշկին (բուժաշխատողին) դիմելու օրը, գանգատները, ըստ անհրաժեշտության՝ վերհուշը (անամնեզ),

12)հիվանդանալու օրը, ամիսը, տարին,

13)հոսպիտալացման դեպքում՝ հոսպիտալացման օրը, ամիսը, տարին և վայրը

14)ախտորոշումը, տրամադրված բժշկական օգնության և սպասարկման տեսակը, ծավալը, (այդ թվում ստացած արյան փոխներարկումներ, ստացած պատվաստումներ, տարած տարափոխիկ հիվանդությունների, տարած վիրահատական միջամտություններ, շարունակական հսկողություն),

15) նշանակված և բացթողնված դեղերը,

16) առողջության վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ (այդ թվում՝ արյան խումբ, ռեզուս գործոն, ալերգիաներ):

5.Առողջապահության բնագավառի տվյալների բազաներում ներառվող անձնական տվյալները պաշտպանվում են «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

6. Առողջապահության բնագավառի տվյալների բազաներում տվյալների մշակման կարգը սահմանում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմինը:

7.Առանց անձի համաձայնության Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած կարգով օրենքին անձնական տվյալներ տնօրինող պետական մարմինները կարող են դրանք փոխանակել կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդությունների արձանագրման, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում կանխարգելիչ միջոցառումներ, այդ թվում բժշկական օգնությունը և սպասարկումը կազմակերպելու և իրականացնելու նպատակներով:

10.06.2016

Հոդված 3.2 Բժշկական գաղտնիքը և դրա փոխանցմանն ու մշակմանը ներկայացվող պահանջները

1.Անձի առողջական վիճակի մասին կամ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալու ընթացքում պարզված տվյալները համարվում են բժշկական գաղտնիք:

2. Բժշկական գաղտնիք չեն համարվում սույն հոդվածի 1-ին մասում նշված անանուն տվյալները: Անանուն տվյալները չեն կարող ներառել որևէ տվյալ, որով հնարավոր կլինի ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

3. Բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցում է հանդիսանում այդ տվյալների՝ որոշակի կամ անորոշ շրջանակի անձանց փոխանցելուն կամ դրանց հետ ծանոթացնելուն ուղղված որևէ գործողություն, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցներով գաղտնիք համարվող տվյալները հրապարակելը, տեղեկատվական հաղորդակցման ցանցերում տեղադրելը կամ այլ եղանակով այլ անձի մատչելի դարձնելը:

4. Բժշկական գաղտնիք համարվող տվյալները կարող են փոխանցվել պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բժշկական գաղտնիք համարվող տվյալները փոխանցելու վերաբերյալ գրավոր համաձայնությունը ենթակա է նոտարական վավերացման, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած դեպքերի: Բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման վերաբերյալ պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության ձևը սահմանում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

5. Բժշկական գաղտնիք համարվող տվյալներ տիրապետող անձը պարտավոր է պահպանել (չփոխանցել) բժշկական գաղտնիքը՝ բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի: Առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության կամ օրենքով չնախատեսված դեպքերում բժշկական գաղտնիքի ապօրինի փոխանցումն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

6. Բժշկական գաղտնիք համարվող տվյալները առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, կարող են փոխանցվել միայն՝

1) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներին՝ պացինետին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելու նպատակով, եթե առանց այդ տվյալների հնարավոր չէ պացիենտին տրամադրել բժշկական օգնություն և սպասարկում,

2) առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնին, ներառյալ՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեության իրականացնող պետական կազմակերպություններ) ՝

ա.վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների և զանգվածային թունավորումների կամ դրանց սպառնալիքի դեպքում,

բ. բժշկական օգնության և սպասարկման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնելիս,

գ. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համաձայն՝ պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման մասին կնքված պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի և որակի ստուգման աշխատանքներ իրականացնելիս,

3) բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեության իրականացնող պետական կազմակերպություններին՝ շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների և զանգվածային թունավորումների կամ դրանց սպառնալիքի դեպքում,

4) դատարանի համապատասխան ակտով,

5) քրեակատարողական հիմնարկի հարցման դեպքում, կապված դատապարտյալին նշանակված պատժի կատարման կամ վարքագծի նկատմամբ հսկողության իրականացման հետ,

6) ռազմաբժշկական փորձաքննություն անցկացնելու նպատակով զինվորական կոմիսարիատների և այլ ռազմաբժշկական հանձնաժողովների հարցման դեպքում,

7)բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական իրավասու մարմնին՝ բժշկասոցիալական փորձաքննություն և վերափորձաքննություն իրականացնելու նպատակով,

8) պատահարի հետևանքով անգիտակից պացիենտի ընտանիքի անդամներին,

9) սույն օրենքով նախատեսված գիտական կամ գիտատեխնիկական գործունեության իրականացման նպատակներին

10) օրենքով նախատեսված այլ դեպքերում:

7. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները բժշկական գաղտնիք համարվող տվյալները (այդ թվում և էլեկտրոնային փաստաթղթերը) պահպանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանած պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկով սահմանված առողջապահության ոլորտի փաստաթղթերի պահպանության համար սահմանված ժամկետներով:

8.Բժշկական գաղտնիք համարվող տվյալներ մշակողները պարտավոր են պահպանել իրենց աշխատանքային կամ պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները: Օրենքի խախտմամբ բժշկական գաղտնիք համարվող տվյալների ապօրինի հավաքելը պահելը, օգտագործելը կամ տարածելը կամ հրապարակելը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Հոդված 3.3 Բժշկական փաստաթղթերը

1.Առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը հաստատում է Հայաստանի Հանրապետությունում պարտադիր վարման ենթակա բժշկական փաստաթղթերի ձևերը, իսկ լրացման և շրջանառության առանձնահատկություններ ունեցող առանձին բժշկական փաստաթղթերի համար նաև դրանց լրացման և շրջանառության կարգերը:

2.Բժշկական հաստատություններում անձնական տվյալներ պարունակող բժշկական փաստաթղթերի պահպանումը պետք է բացառի համապատասխան իրավասություն չունեցող անձանց կողմից դրանց ծանոթանալու կամ պատճենահանելու կամ քաղվածքներ կատարելու կամ որևէ այլ եղանակով դրանցից տեղեկություններ ստանալու հնարավորությունը:

3. Գիտնականները և գիտական աշխատողներն իրավունք ունեն առողջապահության բնագավառում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու նպատակով բժշկական փաստաթղթեր հետազոտել միայն դրանց միջոցով անձին նույնականացնելու հնարավորությունը բացառող միջոցներ (ծածկաշերտեր կիրառելով կամ բժշկական փաստաթղթերում ներառված անձնական տվյալներ չպարունակող հատվածները տրամադրելով կամ որևէ այլ ձևով դրանք ապանձնավորելով) կիրառելու դեպքում: Բժշկական փաստաթղթերում անձի նույնականացումը բացառող միջոցների կիրառման պատասխանատուները բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողն և տվյալ բժշկական փաստաթուղթը վարող բուժաշխատողն է: Եթե բժշկական փաստաթղթերում անձի նույնականացումը բացառող միջոցների կիրառումը թույլ չի տալիս հասնել տվյալ գիտական կամ գիտատեխնիկական գործունեության իրականացման նպատակներին կամ բժշկական փաստաթղթերում անձի նույնականացումը բացառող միջոցների կիրառումը անհնար է տեխնիկական պատճառներով, ապա անձնական, ներառյալ հատուկ կատեգորիայի տվյալներ պարունակող բժշկական փաստաթղթերի հետազոտման միջոցով գիտական կամ գիտատեխնիկական գործունեություն կարող է իրականացվել առանց անձի համաձայնության միայն «Անձնական տվյալների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածով սահմանված կարգով:

4.Սույն հոդվածի պահանջների խախտումը առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

5. Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնելու նպատակով հետազոտման ենթակա չեն բուժման գործընթացում գտնվող պացիենտների բժշկական փաստաթղթերը:

Հոդված 3. Օրենքի 2-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՄԱՐԴՈՒ (ՊԱՑԻԵՆՏ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ»:

10.06.2016

Հոդված 4. Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 4. Բժշկական օգնության և սպասարկման իրավունքը

1.Յուրաքանչյուր ոք՝ սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

2.Յուրաքանչյուր ոք՝ սույն հոդվածի 1-ին մասին համապատասխան իրավունք ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում:

3.Յուրաքանչյուր ոք իրավունք ունի առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն և սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

4.Այլ պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացիների բժշկական օգնությունը և սպասարկումը իրականացվում է տվյալ պետության օրենսդրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի համաձայն:»:

Հոդված 5. Օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 5. Մարդու (պացիենտ) իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս

1. Յուրաքանչյուր ոք (պացիենտ) իրավունք ունի՝

1) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին և բուժաշխատողին,

2) բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս արժանանալ հոգատար և հարգալից վերաբերմունքի,

3)հրաժարվել բժշկական օգնություն և սպասարկումից, բացի օրենքով նախատեսված դեպքերից,

4)բժշկական օգնություն և սպասարկում ստանալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պացիենտի վարման գործելակարգերին, Հայաստանի Հանրապետության սանիտարական օրենսդրության համապատասխան,

5) իմանալ իրեն բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող բուժաշխատողի անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը,

6) հիվանդանոցային պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս ունենալ այցելուներ՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից սահմանած կարգին համապատասխան: Սույն իրավունքը կարող է սահմանափակվել պացիենտի կամ այցելուների առողջության պահպանման կամ անվտանգության նկատառումներով՝ առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից սահմանված դեպքերում,

7) բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս ցավի գնահատման և դրա համարժեք կառավարման,

8) իրազեկ լինել իր հիվանդությանը և համաձայնություն տալ բժշկական օգնության և սպասարկման տրամադրման համար,

9)ստանալ ամբողջական տեղեկատվություն բժշկական օգնության և սպասարկման ծավալների, դրա համար սահմանված վճարների չափի, վճարման կարգի վերաբերյալ,

10) ծանոթանալ իր բժշկական փաստաթղթերին կամ ստանալ դրանց պատճենները «Տեղեկատվության ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:

Հոդված 6. Օրենքի 7-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 7. Օրենքի 9-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 9.Մարդու վերարտադրողականության հետ կապված իրավունքները

1.Մարդու վերարտադրողականության հետ կապված իրավունքները սահմանվում են «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

10.06.2016

Հոդված 8. Օրենքի 10-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 10. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու երեխայի իրավունքը

1.Յուրաքանչյուր երեխա պետական բյուջեի միջոցների հաշվի իրականացվող բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակներում իրավունք ունի ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում:»:

Հոդված 9.Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հոդված 14. Արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման իրականացումը

1. Արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնությունը և սպասարկումն իրականացվում է անվճար՝ պետության կողմից երաշխավորված կարգով:
2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դեպքում, ըստ իրավիճակի և անհրաժեշտության, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և ժամկետով պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները ամբողջությամբ կամ մասնակի դադարեցնում են պացիենտներին պլանային, այն է՝ անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում չպահանջող հիվանդությունների և վիճակների մասով, հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումը: Սույն մասի իմաստով անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3.Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով պացիենտների պլանային հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումը դադարեցնելու դեպքում հիվանդանոցային բժշկական օգնությունը և սպասարկումը տրամադրվում է բացառապես՝

1) արտակարգ իրավիճակների կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց,

2) այլ անձանց՝ անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում պահանջող հիվանդությունների և վիճակների դեպքում:

4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով պացիենտների պլանային հիվանդանոցային բժշկական օգնությունն ու սպասարկումը դադարեցնելու դեպքում անհետաձգելի բժշկական օգնություն և սպասարկում չպահանջող սուր և քրոնիկական հիվանդություններով տառապող պացիենտների բժշկական օգնության և սպասարկման նպատակով պետության կողմից երաշխավորված արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական հաստատություններում կազմակերպվում են ցերեկային ստացիոնարներ: Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից ցերեկային ստացիոնարներում պացիենտների բժշկական օգնության և սպասարկման դեպքերը սահմանում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:

5.Սույն հոդվածի իմաստով ցերեկային ստացիոնար է համարվում բժշկական հաստատության առանձնացված բաժինը, որտեղ պացիենտը շարունակաբար կամ մեկանգամյա կարգով ստանում է անհրաժեշտ բժշկական օգնություն և սպասարկում՝ առանց գիշերելու բժշկական հաստատությունում:»:

Հոդված 10. Օրենքը 17-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 17.1-րդ հոդվածով.

«Հոդված 17.1 Մարդու (պացիենտ) պարտականությունները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս

1.Յուրաքանչյուր ոք (պացիենտ) պարտավոր է.

1) բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս բուժաշխատողին տրամադրել իր առողջության, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդություններով հիվանդանալու դեպքում՝ իր հետ շփված անձանց, ինչպես նաև նախկինում ստացած բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ իրեն հայտնի ամբողջական տեղեկատվությունը,

2) բժշկական օգնության և սպասարկում ստանալիս պահպանել բուժաշխատողի կողմից սահմանված բուժման ռեժիմը,

3) պահպանել բժշկական հաստատության ներքին կանոնները: Սույն պարտականությունը տարածվում է նաև բժշկական հաստատությունում մարդուն (պացիենտ) ուղեկցող անձանց, ինչպես նաև պացիենտների այցելուների նկատմամբ,

4)հարգել այլ պացիենտների իրավունքները:»:

Հոդված 11. Օրենքի 18-րդ հոդվածի ա. կետում «առողջապահական պետական նպատակային և» բառերը փոխարինել «բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի» բառերով:

Հոդված 12. Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) ե. կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ե) պահպանել բժշկական գաղտնիքը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.»,

2) ը. կետում «հետ» բառից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

3) «:Սույն պարտականությունը չի տարածվում գյուղական համայնքների բժշկական ամբուլատորիա կամ առողջության կենտրոն հանդիսացող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների նկատմամբ:»,

4) ժ. կետից հետո լրացնել նոր ժբ. կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ժբ) պացիենտին բժշկական օգնություն և սպասարկում տրամադրելուց առաջ, իսկ անգիտակից կամ կյանքին սպառնացող վիճակում գտնվող պացիենտներին գիտակցության գալուց կամ կյանքին սպառնացող վտանգի վերացումից հետո իրազեկել պացիենտի իրավունքների և պարտականությունների մասին՝ նրան կամ նրա օրինական ներկայացուցչին տրամադրելով իրազեկման թերթիկ: Պացինետի իրավունքների և պարտականությունների իրազեկման թերթիկի օրինակելի ձևը և տրամադրման կարգը հաստատում է առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմինը:»:

Հոդված 13. Օրենքի 19.1-րդ հոդվածի՝

1) **8-րդ մասը** լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Առաջին անգամ մասնագիտական գործունեության հավաստագիրը տրամադրվում է 5 տարի ժամկետով:»,

2) **9-րդ մասում՝**

ա.«երկու տարվա ընթացքում:» բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություն.

«Սույն պահանջը չապահովելու դեպքում մասնագիտական գործունեության հավաստագիրն ուժը կորցրած է ճանաչվում:»,

բ.«պայմանով» բառից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերը:

Հոդված 14. Օրենքի 19.4-րդ հոդվածի՝

1)7-րդ մասում «տեղական» բառից հետո լրացնել «կամ» բառը,

2)8-րդ մասում «Առողջապահական պետական նպատակային ծրագրերի» բառերը փոխարինել «Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի» բառերով:

Հոդված 15. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 22. Բժշկական փորձաքննությունների տեսակները**

1.Հայաստանի Հանրապետությունում իրականացվում են բժշկական փորձաքննության հետևյալ տեսակները.

1) ժամանակավոր անաշխատունակության,

2) բժշկասոցիալական,

3) ռազմաբժշկական,

4)դատաբժշկական,

5) դատահոգեբուժական:

2.Ժամանակավոր անաշխատունակության փորձաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիվանդության (վնասվածք) կամ պրոթեզավորման կամ առողջարանային բուժման անհրաժեշտության կամ հղիության ու ծննդաբերության կամ ընտանիքի անդամի հիվանդության (վնասվածք) պատճառով առաջացած խնամքի անհրաժեշտությամբ պայմանավորված աշխատողի, իսկ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում, նաև այլ անձանց ժամանակավոր անաշխատունակ լինելու փաստի և անաշխատունակության ժամկետների որոշումն է:

3. Բժշկասոցիալական փորձաքննությունը հիվանդության կամ խեղման կամ վնասվածքի հետևանքով օրգանիզմի ֆունկցիաների կայուն խանգարումներով պայմանավորված՝ կենսագործունեության սահմանափակումների գնահատման հիման վրա հաշմանդամության սահմանումն է, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձի վերականգնման և սոցիալական պաշտպանության տեսակների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշումն է.

4.Ռազմաբժշկական փորձաքննությունը անձի՝ զինվորական ծառայության պիտանիության կամ զինծառայողների կամ զինվորական ծառայությունից արձակվածների մոտ առկա հիվանդությունների կամ վնասվածքների կամ խեղումների զինվորական ծառայության հետ պատճառահետևանքային կապի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որոշումն է:

5. Դատաբժշկական փորձաքննությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում կենդանի կամ մահացած անձի տարիքի կամ ինքնության կամ սեռական վիճակի կամ հղիության

(ներառյալ նախկին և ներկա) կամ հղիության ընդհատման փաստի (ներառյալ բժշկական կամ ոչ բժշկական) կամ վնասվածքի կամ հիվանդության առկայության կամ բացակայության կամ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ կատարված արարքի կամ ինքնավնասման կամ առողջությանը պատճառված վնասի ծանրության կամ առողջական կամ ֆիզիկական վիճակի կամ ինքնուրույն նպատակասլաց գործողությունների կատարման կամ մահվան հետ վնասվածքների պատճառական կապի կամ անձի մահվան պատճառի և ժամկետի վերաբերյալ եզրակացության տրամադրումն է:

6.Դատահոգեբուժական փորձաքննությունը օրենքով սահմանված կարգով և դեպքերում անձի հոգեկան առողջության կամ հոգեկան վիճակի կամ անձի մոտ հոգեկան խանգարման առկայության կամ բացակայության կամ գործունակության կամ անգործունակության կամ անձի մեղսունակության կամ սահմանափակ մեղսունակության կամ անմեղսունակության, ինչպես նաև մեղսունակ վիճակում հակաօրինական արարք կատարած և մինչև դատապարտվելը հոգեկան խանգարում ձեռք բերելու վերաբերյալ կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման կամ դատապարտյալի հոգեկան խանգարում ձեռք բերելու դեպքում պատժի հետագա կրման հնարավորության վերաբերյալ եզրակացության տրամադրումն է:»:

Հոդված 16. Օրենքի 24-րդ հոդվածի 1-ի մասից հանել «և ախտաբանաանատոմիական փորձաքննության» բառերը:

Հոդված 17. Օրենքը 24-րդ հոդվածից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 24.1-րդ հոդվածով.

«Հոդված 24.1 Դատաբժշկական փորձաքննությունը

1.Դատաբժշկական փորձաքննությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության քրեական կամ քաղաքացիական կամ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

2.Դատաբժշկական փորձաքննությունը իրականացվում է հետևյալ ձևերից մեկով կամ մի քանիսով.

1) դիահերձում,

2)կենդանի անձի հետազոտում,

3) մարդու օրգանիզմի կենսաբանական ծագման նյութերի քիմիական կամ կենսաքիմիական կամ կենսաբանական կամ հյուսվածաբանական կամ մոլեկուլյար գենետիկական կամ բժշկաքրեագիտական կամ բջջաբանական հետազոտություններ,

4)կենդանի կամ մահացած անձի բժշկական փաստաթղթերի հետազոտում,

3.Դիահերձման ձևով դատաբժշկական փորձաքննությունները իրականացվում են՝

1) մահացածի ինքնությունը հաստատված չլինելու դեպքում,

2) հիվանդանոցային բժշկական հաստատությունում կլինիկական ախտորոշումը պարզված չլինելու դեպքում՝ անկախ տարիքից և հիվանդանոցային բժշկական հաստատությունում գտնվելու տևողությունից,

3) բուժաշխատողի պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ներկայացված հաղորդում ներկայացնելու կամ իրենց լիազորություններն իրականացնելիս հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերման դեպքում՝ դրանց Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու դեպքերում,

4) բռնի մահվան կասկածի դեպքում՝ անկախ պայմաններից և մահը վրա հասնելու պահից, ինչպես նաև բռնի մահվան դեպքում՝ սպանություն կամ ինքնասպանություն կամ դժբախտ պատահարի դեպքում (մեխանիկական վնասվածքներ, մեխանիկական շնչահեղձություն, թունավորումներ, էլեկտրահարություն, ծայրահեղ բարձր կամ ցածր ջերմաստիճանի, ճառագայթային էներգիայի ազդեցություն),

5) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ՝ հղիության արհեստական ընդհատման (աբորտ) դեպքում,

6) հանկարծամահություն՝ անկախ տարիքից, մահը վրա հասնելու հանգամանքից և վայրից։»:

Հոդված 18. Օրենքը 25-րդ հոդվածի՝

1)2-րդ պարբերությունում «առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում» բառերը փոխարինել «բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում» բառերով,

2) 5-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի շրջանակում պետության կողմից երաշխավորված անվճար կամ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման և բժշկական պարագաների փոխհատուցման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 19. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

10.06.2016

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«ՀՈԴՎԱԾ 145. ԲԺՇԿԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՏՎՅԱԼՆԵՐ ՀՐԱՊԱՐԱԿԵԼԸ

1.Բժշկական գաղտնիք պարունակող տվյալները՝ օրենքով նախատեսված մշակողի կողմից առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության հրապարակելը

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:

2. Բժշկական գաղտնիք պարունակող տվյալները՝ օրենքով նախատեսված մշակողի կողմից առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության հրապարակելը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

10.06.2016

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

10.06.2016

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի 19-րդ հոդվածի «2. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ» բաժնում (այսուհետ՝ բաժին) կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1)բաժնի 2.8 կետում «շարունական մասնագիտական զարգացման հավաստագիր» բառերը փոխարինել «առաջին անգամ մասնագիտական գործունեության հավաստագիր կամ վերապահումով հավաստագիր, շարունական մասնագիտական զարգացման հավաստագիր կամ վերապահումով հավաստագիր» բառերով,

2) բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.9-րդ կետով.

«2.9 օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվություն ստանալու համար՝ բազային տուրքի երեսնապատիկի չափով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

10.06.2016

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) 47.8 հոդվածից հետո լրացնել նոր 47.10-րդ, 47.11-րդ, 47.12-րդ, 47.13-րդ, 47.14-րդ, 47.15-րդ, 47.16 հոդվածներով.

«**Հոդված 47.10 Առանց օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության՝ օտարերկրացի բուժաշխատողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը**

1.Առանց օտարերկրացի բուժաշխատողների մասնագիտական կարճաժամկետ գործունեության թույլտվության **օ**տարերկրացի բուժաշխատողի կողմից բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսահարյուրհինսնապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

10.06.2016

Հոդված 47.11 Պարտադիր վարման ենթակա բժշկական փաստաթղթեր չվարելը կամ բժշկական փաստաթղթերի լրացման կամ շրջանառության պահանջները խախտելը

1. Պարտադիր վարման ենթակա բժշկական փաստաթղթեր չվարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև վաթսունապատիկի չափով,

2. Պարտադիր վարման ենթակա բժշկական փաստաթղթերի լրացման կամ շրջանառության պահանջները խախտելը

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև երեսնապատիկի չափով:

3.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.12 Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լրացման ու տրամադրման կարգը կամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկների լրացման և քաղաքացիներին տրամադրելու հետ կապված ներքին ընթացակարգը խախտելը

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լրացման ու տրամադրման կարգը կամ ժամանակավոր անաշխատունակության թերթիկների լրացման և քաղաքացիներին տրամադրելու հետ կապված ներքին ընթացակարգը խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրհիսնապատիկից երկուհարյուրապատիկի չափով

2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.13 Պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջները չկատարելը կամ խախտմամբ կատարելը

1. Պացիենտի վարման գործելակարգերով սահմանված պահանջները չկատարելը կամ խախտմամբ կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.14 Պացիենտին կամ նրա օրինական ներկայացուցչին իրազեկման թերթիկ չտրամադրելը

1. Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան պացիենտին կամ նրա օրինական ներկայացուցչին իրազեկման թերթիկ չտրամադրելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի տասապատիկից մինչև քսանապատիկի չափով:

2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.15 Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման իրականացման պահանջները չկատարելը կամ խախտելը

1. Պետության կողմից երաշխավորված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից օրենքով նախատեսված դեպքում արտակարգ իրավիճակներում կամ Հայաստանի Հանրապետության նկատմամբ օտարերկրյա պետության կողմից իրականացված ռազմական կամ ահաբեկչական գործողությունների արդյունքում տուժած անձանց բժշկական օգնության և սպասարկման իրականացմանը ներկայացվող պահանջները չկատարելը կամ խախտելը

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկից մինչև հազարհինգհարյուրապատիկի չափով:

2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 47.16 Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից օրենքով նախատեսված պաշտոնական ինտերնետային կայք չունենալը կամ օրենքին համապատասխան պաշտոնական ինտերնետային կայք չունենալը

1.Հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից օրենքով նախատեսված պաշտոնական ինտերնետային կայք չունենալը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից մինչև հարյուրհինսնապատիկի չափով:

2. Արտահիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի կողմից օրենքով նախատեսված պաշտոնական ինտերնետային կայք չունենալը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի ութսունապատիկից մինչև հարյուրապատիկի չափով:

3. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի պաշտոնական ինտերնետային կայքում ծառայությունների կամ գնացուցակի կամ բուժանձնակազմի վերաբերյալ տվյալների կամ մասնագիտական ծառայություններ մատուցողների հետ հետադարձ կապի հնարավորության բացակայությունը

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հիսնաապատիկից մինչև վաթսունապատիկի չափով:

4.Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված արարքները կրկին անգամ կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո մեկ տարվա ընթացքում՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ արարքի համար սույն հոդվածով նախատեսված տուգանքի չափի կրկնապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգրքի 244.14 հոդվածում «47.8» թվից հետո լրացնել «47.10, 47.11, 47.12, 47.13, 47.14, 47.15, 47.16» թվերը:

Հոդված 3.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

10.06.2016